Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

ԼԵԶՎԻ ԴԱՍԸՆԹԱՑ

(90 օրից ավել տևողությամբ, միայն Գերմանիայի համար)

Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես հերթագրվել: Հերթագրվել կարող եք միայն առցանց եղանակով: Առցանց հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքի միջոցով. www.eriwan.diplo.de :

Կարևոր ցուցում՝ բժիշկների համար.

Հնարավոր է, որ բժիշկների համար նախատեսված մասնագիտական լեզվի դասընթացի մասնակցությունը գործընթացին մասնակից Օտարերկրացիների հարցերով մարմնի կողմից դիտվի որպես որակավորման, և ոչ որպես առանձին լեզվական դասընթաց: Այդ դեպքում կպահանջվեն լրացուցիչ փաստաթղթեր, որոնք նշված են «Արտասահմանյան մասնագիտական որակավորման ճանաչում՝ համաձայն § 16d AufenthG օրենքի» հուշաթերթիկում:

Եթե նախատեսում եք լեզվի դասընթացի ժամանակ մասնագիտությամբ աշխատելու թույլտվություն կամ ապրոբացիա ստանալու գործընթացի շրջանակում մասնակցել որակավորման այլ լրացուցիչ դասընթացների կամ որևէ բժշկական հաստատությունում պրակտիկա անել, պետք է ներկայացնեք դիմում՝ § 16d AufenthG օրենքի համաձայն Ձեր արտասահմանյան մասնագիտական որակավորումը ճանաչելու խնդրանքով (տես առանձին հուշաթերթիկը): Դրա համար պահանջվում է ներկայացնել ճանաչող հաստատության կողմից տրվող հետևյալ տեղեկանքներից որևէ մեկը՝ Defizitbescheid կամ Zwischenbescheid (միջանկյալ տեղեկանք): Իրավասու հաստատությունում Ձեր դիմումի մուտքի հաստատումը բավարար չէ:

- Ոչ գերմանալեզու փաստաթղթերը՝ բացառությամբ անձնագրի տվյալների էջի, պետք է ներկայացնել գերմաներեն հաստատված թարգմանությամբ:
- Վկայականները, դիպլոմները և նմանատիպ փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և ապոստիլով/լեգալիզացիայով: Բնօրինակները կվերադարձվեն:
- Վիզայի համար հնարավոր է, որ անհրաժեշտ լինի ԳԴՀ աշխատանքի դաշնային գործակալության (Bundesagentur für Arbeit) և համապատասխան վայրի Օտարերկրացիների հարցերով մարմնի (Ausländerbehörde) համաձայնությունը: Վիզան կարող է տրվել միայն, երբ դեսպանությունը ստանա այս համաձայնությունները:
- **Դիմումի քննությունը և մշակումը սովորաբար տևում է 3-14 շաբաթ**, առանձին դեպքերում՝ ավելի երկար:
- Ավիատոմսի ամրագրում վիզայի համար չի պահանջվում, խնդրում ենք ավիատոմս ամրագրել միայն վիզա ստանալուց հետո:
- Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ վիզա ստանալու համար: Ոչ լիարժեք փաստաթղթերը կարող են դանդաղեցնել գործընթացը և հանգեցնել դրանց վերադարձի կամ մերժման: Դեսպանություն ուղարկված այն ֆաքսերը կամ գրությունները,

որոնց վրա բացակայում է վիզայի գործի համարը, չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին:

- **Խնդրում ենք դիմումի վերոնշյալ մշակման ժամանակահատվածում, ձեռնպահ մնալ դիմումի ընթացքի վերաբերյալ հարցումներ անելուց:** Այդ հարցումները էապես ծանրաբեռնում են վիզայի բաժնի աշխատանքը, այդ պատճառով վիզայի բաժինը չի կարող պատասխանել:
- Վիզայի վճարը կազմում է 75 եվրո, որը վճարվում է դրամով՝ դիմումը հանձնելիս:
- Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) պետք է **ներկայացնել A4 ձևաչափով**՝ առանց ամրացնելու, կարելու և թափանցիկ թղթապանակների:

Սկզբունքորեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և մեկական պատճենով: Խնդրում ենք փաստաթղթերը դասավորել այսպես.

- բոլոր բնօրինակ փաստաթղթերը՝ ստորև նշված հերթականությամբ.

- Դիմում-հարցաթերթիկը՝ հայտարարության հետ միասին, և բոլոր թվարկված փաստաթղթերի ընթեռնելի և ոչ մուգ պատճենները՝ ստորև նշված հերթականությամբ.

Անհրաժեշտ փաստաթղթեր

- ☐ գերմաներենով կամ անգլերենով լիարժեք լրացված դիմում-հարցաթերթիկ՝ ներառյալ Կացության մասին դաշնային օրենքի §54-ով սահմանված իրազեկումը: Հարցաթերթիկը կարող եք գտնել դեսպանության կայքում՝ սույն հղումով. https://videx-national.diplo.de ,
- ☐ լիարժեք լրացված և ստորագրված հայտարարություն հասանելիության (հղում) վերաբերյալ,
- ☐ 2 նոր, բիոմետրիկ լուսանկար, մեկը խնդրում ենք սոսնձել դիմում-հարցաթերթիկներին,
- ☐ գործող ճամփորդական անձնագիր, որը վավերական լինի առնվազն 6 ամիս, (անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ անձնագիրը տրված լինի ոչ ավելի վաղ, քան տասը տարի առաջ),
- ☐ անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, վիզա կամ որևէ այլ նշում,
- ☐ հաստատում այն մասին, որ լեզվի դպրոցում գրանցված եք ինտենսիվ դասընթացներին մասնակցելու համար: Հաստատման մեջ դիմողի տվյալներիից բացի պետք է նշվի շաբաթական դասերի քանակը: Լեզվի դպրոցը պետք է հաստատի, որ դասընթացի գումարը վճարված,
- ☐ գրավոր հիմնավորում՝ պլանավորած դասընթացի (նաև լեզվի դպրոցի ընտրության), հետագա մասնագիտական հետագա պլանների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ մինչ այդ լեզվի դասընթացին նախապատրաստվելու մասին, օր.՝ Հայաստանում գերմաներեն սովորելու վերաբերյալ տվյալներ: (գերմաներենով կամ անգլերենով)
- ☐ կրթության, ինչպես նաև գործունեության վերաբերյալ մանրամասն ինքնակենսագրություն՝ առանց բացթողումների, գերմաներենով կամ անգլերենով
- ☐ փաստաթղթեր նախկին և ներկայիս գործունեության/որակավորման վերաբերյալ (ուսանողական գրքույկ, ավարտական դիպլոմներ, աշխատանքայինի գրքույկ), կա՛մ գերմաներենով կա՛մ անգլերենով կամ թարգմանությամբ,
- ☐ ապացույց ուսման ընթացքում ֆինանսապես ապահովված լինելու վերաբերյալ.
  Եթե ուսումը հովանավորում է Գերմանիայի քաղաքացիություն կամ կացության իրավունք ունեցող անձը, ապա պետք է ներկայացվի ուսման ողջ ընթացքի կամ լեզվի դասընթացի ողջ ժամանակահատվածի համար ԳԴՀ Կացության մասին օրենքի 66-68 հոդվածներով նախատեսված հատուկ ձևաթղթով լրացվող պարտավորագիր: Պարտավորագիրը պետք է ներառի „Bonität nachgewiesen“ նշումը
  կամ՝
  ինքնաֆինանսավորման դեպքում անհրաժեշտ է, որ դիմողն իր անունով Գերմանիայում, գերմանական որևէ բանկում ունենա արգելափակված հաշվեհամար՝ առնվազն ամսական **1.027 /**

տարեկան՝ **12.324** եվրո գումարով: Վիզայի համար դիմելիս ապրուստի միջոցների մասին սրպես ապացույց կարող եք ներկայացնել արգելափակված հաշիվ: Դուք ազատ եք տվյալ ծառայությունը մատուցող ընկերության ընտրության հարցում:

- Այլ՝ ոչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձինք, օրինակ՝ Ռուսաստանի, Իրանի կամ Հնդկաստանի քաղաքացիները իրենց բնակությունը Հայաստանում հավաստելու համար պետք է ներկայացնեն Հայաստանի կացության թույլտվություն՝ ռեզիդենտ քարտ (առնվազն վեց ամսվա):

- Բժշկական բավարար ապահովագրական պաշտպանվածության վկայական
  Եթե Դուք որպես ուսանող ցանկանում եք ապահովագրվել օրենքով սահմանված բժշկական ապահովագրության շրջանակում, ապա պետք է նկատի ունենաք, որ այն սկսելու է գործել միայն Ձեր՝ Գերմանիայում բնակության վայրում հաստատվելու և համալսարան ընդունվելու պահից: Եթե Դուք ավելի շուտ եք մուտք գործելու Գերմանիա, պետք է մինչև համալսարան ընդունվելը և օրենքով սահմանված բժշկական ապահովագրության մեջ Ձեր ներառվելը կնքեք ժամանակավոր՝ մասնավոր բժշկական ապահովագրություն: Ճամփորդական բժշկական ապահովագրությունները, հնարավոր է, չապահովեն ապահովագրական պաշտպանվածություն Ձեր ապահովագրության պայմաններում, եթե նախատեսված է երկարաժամկետ և տևական կացություն: Հնարավոր է, որ այսպես կոչված „incoming“ ապահովագրությունները նույնպես չապահովեն այդպիսի պաշտպանվածություն:

Դեսպանությունը հուշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82–ի՝ յուրաքանչյուր դիմող պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, եթե որևէ փաստաթուղթ բացակայում է, դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել:

<u>Կարևոր ցուցումներ</u>

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ **դեսպանության շենքում հյուպատոսական բաժնի պատուհանի մոտ** գանձվող այցագրի վճարից բացի այցագրի համար դիմելիս այլ վճար նախատեսված չէ:

Դեսպանությունը **չի համագործակցում** որևէ տուրիստական ընկերության հետ: **Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող ծառայություններ մատուցող գրասենյակներին: Ճամփորդական կամ այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ իրենք համագործակցում են դեսպանության հետ, չի համապատասխանում իրականությանը:**

Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշում է կայացնում բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում փող մի՛ վճարեք:**

Այցագրի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ Դուք կարող եք անվճար ստանալ դեսպանության հյուպատոսական բաժնի աշխատակիցներից: Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն: